ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը նոյեմբերի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀԵՏԱԽՈՒՅԶԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 5-ին նշվում է Հետախույզի օրը, որի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ՀՀ զինված ուժերի հետախուզական զորքերի և հատուկ ստորաբաժանումների զինծառայողներին: Մեր հայրենիքի պաշտպանության գործում անուրանալի է հետախուզական զորքերի մեծ ներդրումն ու նվիրյալ ծառայությունը:

Թե՛ խաղաղ, և թե՛ պատերազմական ժամանակներում մեր հետախույզները բարձր պատրաստվածությամբ են իրականացրել մարտական ու անվտանգային առաջադրանքները, գործել են անմնացորդ նվիրումով՝ չխնայելով անգամ սեփական կյանքը:

Խոնարհումով ու երախտիքով առաջնահերթ ուզում եմ հարգենք հանուն հայրենիքի նահատակված մեր բոլոր հետախույզների հիշատակը, արժևորենք նրանց սխրանքներն ու անձնուրաց ծառայությունը:
Գնահատելով մեր առաջապահ ուժերի բարդ ու պատասխանատու աշխատանքը՝ մասնագիտական օրվա առիթով շնորհավորում եմ հետախուզական զորքերի բոլոր ծառայողներին, մաղթում եմ խաղաղ, զգոն և անվտանգ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ